

ձեր երեխային: Վուք հանգիստ եղէք, մանկական սէրը դէպի խաղը կիմանայ իւր համար վայելուչ սահմաններ և պատշաճաւոր արտայայտութիւն գտնել: Խաղին ուրիշ պարագմունք կմիանան, խաղերը ուրիշ ձևեր կստանան. զննական խաղալու, հասարակ վազվզելու փոխանակ կսկսեն կրիկետ խաղալ, բայց չի փոխվի խաղի այն զօրութիւնը, որ կրթող է խելքի և սրտի:

Եւ եթէ խաղը արդարեւ, ինչպէս ասացի, առօրեայ աշխատանքն է. և ոչ թէ ժամանակի զուր կորուստ (ինչպէս սովորաբար լինումէ) ուստի խաղը երեխայի ոյժերին համապատասխան աշխատանքն է պիտի լինի: Իսկ իւրաքանչիւր աշխատութեան հետեանքը որ և իցէ օգտաւետութիւն, մարդին պիտանի որ և իցէ գործ պիտի լինի: Մանկական աշխատութիւնը մի և նոյն է: Բայց զնաակ խաղալը կամ աննպատակ վազելը կարող է արդեօք որ և իցէ օգտաւետութիւն համարվի: Որքա միայն մարդուն մկանուններ կամ բազուկներ, Ուրեմն սա աշխատութիւն չէ, այլ մկանունների մարդուն:

Եթէ մենք կամենումենք—իսկ կամենալ այս մենք այժմ արտաւորենք—որ մանուկների խաղը նոցա աշխատանքն է լինել. մանկական գործունէութիւնը անշուշտ ուղղելու ենք օգտաւետութեան հետեւանքին, Այն ըստից, երբ երեխան սկսումէ իւր միտքը բառերով յայտնել, նա արդէն պիտի աշխատէ,—և աշխատէ այս բառի բուն նշանակութեամբ: Թոյլ տուէք նոքան կատարել այն ինչին որ ոյժն է հասնել: Աորա աշխատութիւնը այնպէս

ձևակերպեցէք, որ երեխան աշխատելով զարգացնէր բոլոր իւր ընդունակութիւնները: Բայց թող նորա իւրաքանչիւր աշխատութիւնը վերջանայ օգտաւետ գործով որ օգտաւետ լինէր իւրան կամ իւրան շրջապատողներին, ինչպէս վերեւ ասվեցաւ: Ահա կրթութեան առաւել փմաստուն եղանակը: Սա դժուար է և մենք սովոր չենք այս եղանակին. բայց «ա» և «Բ»-այն «ա» է կարևոր: Եւ այս եղանակը այնքան շատ դժուար ևս չէ: Վշխուորն սորա սկիզբներ սեպհականացնելն է: Իսկ գործնապէս իրագործելու հնարագիտութիւնը քիչ թէ շատ իւրաքանչիւր ցանկացողը կունենայ: Աւերջապէս նոյն ինքն դժուարութիւնը իւր գեղեցկութիւններ ունի, այն մեծամեծ հետեւանքներն աչքի առաջ ունենալով, որոց կարող է հասցնել այս եղանակը:

Իսրայէլի Հարդապէս Սրբապետ:

ՀԱՅՈՑ ԼԵՂՈՒԻ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՏԵԱԿԱՆ
ՆԵՐԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ:
(Ծարանակ-Էջ 1):

Ինչպէս և լինի՝ Հայոց պատմաց կարևորութիւնը հին ժամանակի նկատմամբ քոնէ անժխտելի է նոցա այն արժանաւորութիւնը, որ նոքա իրենց պատմելի իրողութեանց և պատահարաց մէջ աւելի խիստ և մեծ զգուշութեամբ ընտրողութիւն են արել, նշանաւոր կարևորութիւն չունեցող շատ քիչ գործեր են յառաջադրում, և իրենց հեղինակութեանց ու գրուածոց ոճի ուղղութեան և մշակման աւելի ջանադիր են եղեր քան

Թէ Պարսից և Արաբացւոց մատենագիրք-
կարելի է մինչև անգամ պնդել որ Հայ
պատմիչք աւելի բարձր և վերին տեղն են
բռնում քան Յունաց կայսերութեան
պատմաց մեծ մասը, և նոքա դարձու-
ածոց զեղեցկութեան և ոճի հաճոյակա-
նութեան համար չեն դիմում այն երեւա-
կայական զառանցանաց, որոց դիմում են
արևելեան միւս մատենագիրք պերճախօս
լինելու ջանից ձգտելով, և թէպէտ Հայ
պատմիչք բոլորովն չեն հեռանում արեւե-
լեան ոճի էական յատկութիւնից, սա-
կայն զիտեն հրաժարիլ այն այլանդակ
համեմատութիւններից և շատ յաճախ
անիմաստ այլաբանութիւններից՝ որոնք
Պարսկական և Արաբական ճարտարախօ-
սութեան զատիչ և յայտարար բնութիւ-
նն են կազմում: Անչաւ անգամ կարելի
է հաստատել առանց աւելազանցութեան
որ Հայ մատենագրաց շատերը, ինչպէս
Սովսէս Խորենացին, Աղեշէն, Ղազար
Փարպեցին, Յովհաննէս վեցերորդ կա-
թողիկոսն և այլ քանիք իրենց ճարտա-
րախօսութեան, ոճոյ պարզութեան և
դարձուածոյ զիտական բանահիւստց
կողմանէ արժանի են Աւրոպականաց ու-
շաղիր ընթերցանութեան, և որոնք դար-
ձեալ ևս կարող են հետաքրքրութեամբ
ընթերցուիլ, մեզ մօտ գտնուած և Հը
ռովմայու Յունաստանի ի լոյս հանած
երևելի հեղինակներից յետոյ:

Հայաստանի և Արևելեան միւս երկիր-
ների պատմութեան ծանօթութիւնը չէ
միայն այն զրականական օգուտը, զոր կա-
րելի է քաղել Հայկական լեզուի ուսում-
նասիրութիւնից որ կարող է դեռ ևս մեծ
ծառայութիւն մատուցանել նախկին զը-

րականութեան, նոր իրողութիւնք յա-
ւելլով եկեղեցական և քաղաքական պատ-
մութեան վերայ: Հայոց Յունաց և Հը-
ռովմայեցւոց հետ ունեցած քաղաքական
յարաբերութիւնքը պատճառ եղան Հա-
յաստանի մէջ Յունական լեզուի ուսման
և մինչև անգամ կիրարկութեան տարած-
մանը, Վրիստոսի թուականից շատ ա-
ռաջ, և շատ հաւանական է որ ինչպէս
Ասորիք, Ազիպտացիք և միւս Արևելայք
նոյն և շատ Հայ մատենագիրք իրենց հե-
ղինակութեանց գործածական լեզուն այդ
ընդունած կլինէին: Տիգրանայ Արտաւազդ
որդին, զոր Անտոնիոս կայսրը դաւաճա-
նութեամբ ձերբակալ արաւ իւր Աղեք-
սանդրիայ աթոռանիստ քաղաքում, ուր
և կնքեց Արտաւազդ իւր կենաց օրեր,
Յունարէն լեզուաւ էր աշխատասիրէր իւր
մի քանի ողբերգութիւնք և պատմական
գրեանք ⁽¹⁾): Հայաստանի նախկին թագա-
ւորաց այն բոլոր գրամները, որք ներկա-
յումս մեզ մօտ են գտնուում, Յունա-
րէն լեզուաւ են փորագրուած և երևում է
որ հասարակաց յիշատակարանների ար-
ձանագրութեանց մէջ ևս մտած էր այդ
լեզուի կիրարկութիւն ⁽²⁾:

Արք չորրորդ դարու սկզբներում Հա-
յաստանը ընդունեց Վրիստոնէութիւնը,
Հայոց Հռովմայեցւոց կայսերութեան
հետ ունեցած կապերն առաւել ևս ամ-
րապնդեցան. շատ Ասորիք և Յոյք եկան

(1) Պլուտարք. հատ. Ա. էջ 564 հրատարա-
կութիւն Ռիւպլու Սիւիան. Պարթիկ. հատ. Ա.
էջ 261. հրատարակութիւն Տօլ Սուիդաս:

(2) Մովս. Խորեն. Պատմ. գիրք Բ. գլուխ 65.
էջ 185:

Հայաստանի իրենց բնակութիւնը հաստատելու¹⁾ և մեծապէս նպաստում էին նորաբողոքը զբաղանութեան ուսնացման ընդ նմին և Յունական լեզուի կիրարկութեան տարածման: Հայաստանի Պարսիկ կառավարիչք Յունական լեզուաւ կամ տառերով գրուած գրքերը ոչնչացնելու խիստ հրամաններ էին հանում²⁾։ այդ հրամաններից երեւում է որ այդ միջոցում Հայաստանում Յունական բազմութիւ գրուածք էին գտնուում: Պարսից աւերմունքները անկարող էին բոլորովին բնաջինջ առնելու այդ գրուածքները ոչ իսկ խեղդել Հայոց առ Յունական գրուածքն ունեցած ճաշակը, վասն զի փոքր ինչ յետոյ դարձաւ տեսնումենք Յունական գրականութեան դպրութեան ի Հայս նոր իմն եռանդիւ վերածնութիւնը: Հինգերորդ դարու սկզբներում Ս. Սահակ Արշակունի Աթուղիկոսը այդ դպրութեան յառաջ տանելուն ամենայն միջոց ի գործ դրեց և Մեսրոպ զխոնականի հօր օգնականութեամբ ընդհանրացրեց զայն իւր Հայրենեաց մէջ, ապա աշակերտաց մեծաթիւ դաս մի կազմեցին երկուքեան ի միասին և ուղարկեցին Հռովմայեցւոյ կայսերութեան զանազան քաղաքներն յուսումն դպրութեան³⁾։ Սոցա աշխատութեան

շնորհիւ է յառաջ եկեր Յունարէն հեղինակութեանց Հայերէն թարգմանութեանց մեծ մասը: Սոքա են դարձեալ ամբողջ Աստուածաշունչը ըստ եօթանասնից⁴⁾, Եւսեբիոսի եկեղեցական Պատմութիւնը⁵⁾, բազմութիւ Եկեղեցւոյ Հարց գրուածքները և Պղատոնի ու Երիստոտէլի աշխատասիրութիւնքն ի Յունականէն ի Հայ վերածողք: Վերջնոցս թարգմանութիւնը գրեթէ ամբողջապէս Ղաւթի ճանաղթ փիլիսոփայի աշխատասիրութեանն է պատկանում որ աշակերտակից էր Մովսէս Խորենացւոյ և որ կայր հինգերորդ դարում: Եթէ մեզ մօտ արքունի Մատենադարանում գտնուած թարգմանութեամբ⁶⁾ կարելի է դառել այս թարգմանութիւնը՝ յայնդէպս հնարէ եզրափակել որ մեծ ճշգրտութիւն ունին սոքա և կարեն նպաստել ճշտութեամբ պարզելու այս փիլիսոփայից բնագրի շատ տեղերի միտքը, որք այլայլանաց և փոփոխութեանց են ինթարկուեր ընդօրինակւաց տղիտութեան պատճառաւ:

Յետոյ Հայաստանում լոյս տեսաւ Հիպոկրատէսի և Ալլիէնի գրուածոց թարգմանութիւնը. և ի վաղուց արդէն կար Հոմերոսի բանաստեղծական քերթուածոց ամբողջ թարգմանութիւնը⁷⁾։ Մով-

(1) Պատմ. Ագաթ. էջ 375. 377. Ա հատ. քառածալ. Պոստանդնուպօլիս 1709 թ. Պատմ. Տարօնայ. Զենոբ. ղակ. էջ 47. Ա հատ. 12 ծալ. Կ. Պօլիս. 1719 թ.:

(2) Մովս. Խոր. գիրք Գ. զլուխ 36. էջ 273. զլուխ 54 էջ 300.

(3) Մովս. Խոր. գիրք Գ. զլուխ 60. էջ 311 զլուխ 62. էջ 314. 315.

(4) Մովս. Խոր. գիրք Գ. զլուխ. 53. էջ 299. Ղազար. փարպ. պատմ. Հայոց. էջ 30. 31. 32. 1. հատ. 12. ծալ. վեցերորդ. 1793.

(5) Մովս. Խոր. գիրք Բ. զլուխ 9. էջ 101.

(6) Չեռաղիր Հայոց. Համար 105. 106.

(7) Երբունի Մատենադարանում հայերէն ձեռագրաց 126, համարում, գտնուում է — զրթուարիմաց և սակաւ գործածական բառերի բա-

սէս Խորենացին իւր Հայաստանի պատմութեան մէջ շատ յաճախ յիշատակում է Յոյն մատենագիրք, ինչպէս Գիողորոս Արիւսացի, Յովսէփ, Պէրոզ, Երիզէն, Վէֆալիոն, Ուրմալիոգորոս, Մանեթոն, Յուլիոս Եփրէկեցի, Գլեկոն Թրալեցի և ուրիշ անձանց ժամանակագիրք, քանի մի տեղ ևս նոցա խօսքերն յիշատակել չի դնում¹): Սամուէլ Անեցոյ² ժամանակագրութեան վկայութեան նայելով կարելի է ենթադրել որ երկոտասաներորդ դարու վերջերում Պերոզի պատմութիւնը կայր Հայերէն լեզուաւ, այն ինչ հաւանական է որ այս մատենագիրք նորա խօսքերը Մովսէս Խորենացոյ և իրին ծանօթ Լուսերիոսի ժամանակագրութեան վկայութեամբ է մէջ բերում:

Հայաստանի կործանումն և Պարսից արած աւերմունքներն չկարողացան թուլացուցանել ի Հայս Յունական լեզուի ուսումնասիրութիւնը. յընթացս Հինգերորդ և վեցերորդ դարուց Հայերը Աստուածաբանութեան և եկեղեցական պատմութեան վերաբերեալ բազմաթիւ գորուածք վերածին ի Յունականէ ի Հայ բարբառ: Լօթներորդ դարու վերջերում

Լական նշանաւոր ժողովածոյք որ հանուած են Հոմերոսի Հայերէն թարգմանութիւնից:

(1) Մովս. Խոր. գիրք. Ա. զուլս. 1. էջ 3. զուլս 3, էջ 7, 8, զուլս 4, էջ 13 14, զուլս, 15, էջ 18, զուլս 17, էջ 48, գիրք. Բ. զուլս 7, էջ 95, զուլս 9, էջ 101, զուլս 12, էջ 105, 106, զուլս 14, էջ 111, զուլս 25, էջ 125, զուլս 32, էջ 145, զուլս 71, էջ 195, գիրք Գ. զուլս 1, էջ 231:

(2) Արք. Մատ. ձեռագ. Հայոց, համար 96, fol. 1 gers, 3 rect. et 7 rect.

Ներսէ՛ Համակարան Հայաստանի կառավարիչ և Պատրիկը ի ձեռն Փիլոն վարդապետի թարգմանել տուաւ Սոկրատայ¹) Լեկեղեցական պատմութիւնը, որոց շատ կտորներն գտանուում են առ մեզ արքունի Մատենադարանում: Ութերորդ դարու սկզբում նշանաւոր և անուանի Հայ եկեղեցական Լուսնորդն Սիւնիքի Ստեփաննոս Արքեպիսկոպոսն, որ ի Վոստանդնուպոլիս էր ուսումնասիրել Յունական լեզուի դպրութիւնը, ի Հայ վերածեց Ս. Գիորիսիոսի Արիսպագացոյ, Ս. Գլիգորի Նիւսացոյ և ուրիշ շատ գրուածքներ²): Հայոց Յունական գրականութեան մէջ զգացած ճաշակը զիւ հետեւեալ տարիներն ևս պահպանուում էր նոցա մէջ, որոյ վկայք են հանդիսանում այն ամենայն տեսակ բազմաթիւ մատենագիրք, որոց թարգմանութիւնը նոր ժամանակներումն է եղեր և զորս թուելը երկար ժամանակի կարօտութիւն ունի: Մետասներորդ դարու միջին ժամանակները Գլիգոր Մագիստրոս Արշակունի Հայիշխանը՝ որ իւր գիտնականութեամբ և զինւորական տաղանդներով ականաւոր ոմն էր դարձեր, ի Յունականէ ի Հայ վերածեց շատ մաթեմատիքական գրուածքներ³): Լօթնետասներորդ դարու միջին

(1) Միք. 2ամ. Հայոց Պատմ. հատ. Բ. գիրք Գ. զուլս 57, էջ 375, 3, հատ. քառածալ Վեւեհտիկ. 1785, համառօտ Պատմ. Հայոց Միթիմալայ 2աղըճեան, էջ 191, Ա. հատ. 8ծալ, Վեւեհտ. 1811:

(2) Միք. 2ամ. Հայոց Պատմ. հատ. Բ. գիրք Գ. զուլս 61, էջ 399:

(3) Միք. 2ամ. Հայոց Պատմ. հատ. Բ. գիրք 2. զուլս 39, էջ 928:

Ժամանակները Սիմէօն Զուղայեցի հօգա-
կաւոր վարդապետը, որ Ասպահանումն էր
բնակուում, Պրոկղէս փիլիսոփայի զրուա-
ծոց Հայերէն Թարգմանութիւնը սրբա-
գրեց, զոր իրանից շատ առաջ Սիմէօն
քահանայն Թարգմաններ էր Աւրացերէն
Թարգմանութիւնից ¹⁾ :

Ասորական գրականութիւնը դեռ ևս
մեծ օգնականութիւն կարէ քաղել Հայ-
կականից որքան քաղաքական՝ նոյնքան և
եկեղեցական և սուրբ Հարց կենսագրու-
թեանց պատմութեանց վերաբերութեամբ.
Հայաստանում քրիստոնէութեան հաս-
տատուելուն պէս, շատ Ասորիք եկան բազ-
մութեամբ անդ բնակուելու, աւետարա-
նական վարդապետութիւնը քարոզելու և
ուսուցանելու, վանքեր կառուցանելու և
եպիսկոպոսական աթոռ հաստատելու ²⁾ :
Տարօնայ գաւառի մէջ եղած Ս. Կորա
պետ հօգակաւոր վանքը, Հայաստանի հին
աստուածոց նուիրուած մեհենի աւերա-
կաց վերայ շինուեցաւ Ջենոր անուն Ա-
սորւոյ մի ձեռքով՝ որ Ս. Գրիգորի Լու-
սաւորչի Հայաստանի Առաքելոյ Ժամա-
նակակիցն էր ³⁾ : Մինչև վեցերորդ դա-
րու վերջերը սորա բոլոր յաջորդք Ասո-
րիք էին ⁴⁾ : Հայաստանի հարաւային—

արևելեան բոլոր մասերը, Տիգրիս և Եփ-
րատ գետերի միջնափայտում եղած Ամիթ
և Միաֆարիկին քաղաքաց շրջակայքը,
Օտփաց նահանգը և մերձակայ կողմունք
բոլորն ևս Ասորեստանեայց ազդեցութեան
ներքոյ էին, մանաւանդ կրօնական և գրա-
կանական յարաբերութեանց նկատմամբ:
Այս նահանգաց բոլոր եպիսկոպոսունք
Ասորիք էին և Անտիոքայ Պատրիարքի ի-
րաւասութեան տակ ¹⁾ : Բոլոր վանականք
և մատենադիրք Ասորւոց լեզուն էին ի կիր
արկանում եկեղեցական արարողութեանց,
գրականական աշխատութեանց և այլ
զրուածոց մէջ : Հայաստանում բնակող
Ասորի քահանայք վերջին այնպէս հզօ-
րացան մինչ փորձ փորձել ձկտեցին Աս-
թուղիկոսական դահր բարձրանալու, նո-
ցանից շատերը Պարսկաստանի Թագաւորի
և Պարսիկ զինուորական հրամանատարաց
նպաստիւք և պաշտպանութեամբ կարո-
ղացան աքսորել տալ օրինաւոր Աթու-
ղիկոսը և ամբառնալ Ս. Գրիգորի Հայ-
րապետական աթոռը ²⁾ : Այս զանազան
փորձերը մեծ ատելութիւն ներշնչեցին
Հայոց առ Ասորիս, ինչպէս կարելի է տես-
նել նոցա շատ գրուածոց մէջ, և թէև
այդ գրուածքները կրօնական հարցերի
վերաբերութեամբ մեծ համաձայնութիւն
են արտայայտում, այնու ամենայնիւ նո-
ցա մէջ մեծ հակադրութիւն է երևում
միմեանց դէմ :

(Մանգեւն է յեղեղայն) :

(1) Պատմ. Հայոց, Առաքել Դաւրիժեցւոյ,
ղրութ 29, էջ 395, 1. հատ, 88ալ. Ամատր-
գամ. 1669 թ.

(2) Տարօնայ պատմ. Զենոր, էջ 47.

(3) Ազատ. էջ 363, 364, 365, Զենոր. պատմ.
Տարօն. էջ 63, 64.

(4) Յովհաննէս Եպիսկոպոս Մամիկոնեանց,
Պատմ. Տարօնայ. Կ. Պոլիս. 1719, Ա. հատ. 12ա-
ծալ.

(1) Lequien, Oriens cristianus. tom. 11. p
990—1007.

(2) Մովս. Խոր. զիրք Գ. զլրութ 64, էջ 318,
ղրութ 65, էջ 319, 320, զլրութ 66, էջ 322.
Ղազար Փարպ. էջ 46, 47.